## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Արագածոտնի մարզի գ. Ռյա Թազա կրթահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի փետրվարի 21-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34 գնման պայմանագրում 2024 թվականի մարտի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 28.12.2023թ N2323-Ն և 26.10.2023թ. N 1869-Ն որոշումներ: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

21.02.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34 գնման պայմանագրի

ք. Երևան 26.03. 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Կ. Մինասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն և 26.10.2023թ. N 1869-Ն որոշումները և **ՀՀ Արագածոտնի մարզի գ. Ուջա Ծագա կրթահամալիրի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 21.02.2024թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N3-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Հիմք ընդունելով Կապալառուի առաջարկությունը՝ հաստատել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև 12 ամսում Կապալառուի կողմից կատարելիք աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ՝ 290 000 000 ՀՀ դրամ:

1.1.3 Սահմանել, որ Համաձայնագրի շրջանակներում

1) Աշխատանքների կատարման ծավալները նախատեսվում են 12 ամսում կատարելու հաշվարկով՝ պայմանով, որ պակաս ֆինանսական միջոցների բյուջետավորումը և վճարումները կատարվում են 12 ամիսը լրանալուն հաջորդող մինչև 90 օրվա ընթացքում:

2) Պատվիրատուն՝ վճարման ժամանակացույցով սահմանված ամիսներին, Կապալառուի բանկային հաշվին փոխանցում է մինչև 66 921 596 ՀՀ դրամի չափով կանխավճար՝ համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է ստորագրված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Համաձայնագրով 12 ամսում կատարվելիք աշխատանքների ընդհանուր գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝

ԱԳ=ԿԾ*ՊՏ՝

ԱԳ– ավելացվող գումար,

ԿԾ– պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%–ը,

ՊՏ– պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է երկու էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է մեկ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011048718
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. տ. 7
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2500010890940100
ՀՎՀՀ 08914368

Տնօրեն՝
_______________ Կ. Մինասյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավե
21.02.2024թ. կնք
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34 գնման պայմանն
26.03.2024թ. կնքված N 1 համաձայնե
«Հավելվա
21.02.2024թ. կնք
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/34 գնման պայմանն

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դր

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45221142/605 | ՀՀ Արագածոտնի մարզի գ. Ռյա Թազա կրթահամալիրի կառուցման աշխատանքներ | - | - | 23 900 600 | 71 701 700 | 71 701 700 | 71 701 700 | 143 403 400 | 143 403 400 | 143 403 400 | 239 005 700 | 239 005 700 | 239 005 700 | 239 005 700 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: »:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011048718
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_______________ Մ. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. տ. 7
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2500010890940100
ՀՎՀՀ 08914368
Տնօրեն

_______________ Կ. Մինասյան
(ստորագրություն)
Կ.Տ